ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

գ. Լոռի Բերդ **« 25 » դեկտեմբերի 2024թ.**

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն ԹԻՎ 13

ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Կայացավ ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի ավագանու 2024թ. հինգերորդ նստաշրջանի՝ դեկտեմբերի 25-ին, ժամը՝ 12:00-ին հրավիրված հերթական նիստը:

Նիստը ուղիղ հեռարձակվում է համայնքապետարանի պաշտոնական յութուբյան ալիքով:

Նիստին ներկա էին Լոռի Բերդ համայնքի ավագանու տասնմեկ անդամները, բացակա էին՝ Հարություն Պապյանը, Սիլվա Մարգարյանը, Անի Սերոբյանը և Միշիկ Գևորգյանը:

Նիստը վարեց՝ Լոռի Բերդ համայնքի ղեկավար՝ Արայիկ Ներսիսյանը:

Նիստը արձանագրեց՝ Լոռի Բերդի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար՝ Անի Մարտիրոսյանը:

Համայնքի ղեկավար Ա. Ներսիսյանը ներկայացրեց նիստի օրակարգը, որտեղ տեղ էին գտել հետևյալ հարցերը.

Լսեցին՝

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Զեկ./Արայիկ Ներսիսյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածով և 14-րդ հոդվածի 6-րդ կետով, 16-րդ հոդվածի 5-րդ մասով՝

ավագանին որոշեց՝ հաստատել ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի ավագանու 2024 թվականի հինգերորդ նստաշրջանի հերթական նիստի՝ դեկտեմբերի 25-ի նիստի օրակարգը՝ համաձայն՝ ստորև ներկայացված տեսքի.

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳ

1) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի ավագանու 2024 թվականի հինգերորդ նստաշրջանի հերթական նիստի՝ դեկտեմբերի 25-ի նիստի օրակարգը հաստատելու մասին:

2) Տաշիր Պլյուս Տեղական Ակտիվ Խումբ» տարածքային զարգացման հասարակական կազմակերպությանը անդամակցելուն հավանություն տալու մասին:

3) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքական, հայեցողական, համայնքային ծառայության պաշտոններ զբաղեցնող և տեխնիկական սպասարկում իրականացնող անձնակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի ավագանու 2024թ. փետրվարի 15-ի թիվ 11-Ա որոշումը ուժը կորցրած ճանաճելու մասին:

4) ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայողների հավելավճարի կիրառման կարգը և չափերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի ավագանու 2022թ. դեկտեմբերի 12-ի թիվ 57-Ա որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին:

5) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքում 2025 թվականի համար տեղական տուրքերի տեսակները և դրույքաչափերը հաստատելու մասին:

6) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի 2025 թվականի բյուջեն հաստատելու մասին:

7) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի ավագանու հինգերորդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օրը և ժամը սահմանելու մասին:

11 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ:

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 75-Ա/

Լսեցին՝

«ՏԱՇԻՐ ՊԼՅՈՒՍ ՏԵՂԱԿԱՆ ԱԿՏԻՎ ԽՈՒՄԲ» ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ԱՆԴԱՄԱԿՑԵԼՈՒՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Զեկ./Անի Մարտիրոսյան/

ՄԱԿ-ի զարգացման ծրագրի (ՄԱԶԾ) հայաստանյան գրասենյակը՝ ՄԱԿ-ի պարենի և գյուղատնտեսության կազմակերպության հետ գործընկերությամբ և ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության հետ սերտ համագործակցությամբ՝ Եվրոպական միության ֆինանսավորմամբ, Հայաստանի Հանրապետության Լոռու և Տավուշի մարզերում իրականացնում է «Տեղական դերակատարների զորեղացում՝ հանուն զարգացման Լոռու և Տավուշի մարզերում» քառամյա ծրագիրը, որի շրջանակներում առաջացել է «Տաշիր Պլյուս» տեղական ակտիվ խումբ» տարածքային զարգացման հասարակական կազմակերպությանը անդամակցելու անհրաժեշտություն, ինչպես նաև հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, համաձայն որի՝

ավագանին որոշեց՝ տալ հավանություն՝ «Տաշիր Պլյուս Տեղական Ակտիվ Խումբ» տարածքային զարգացման հասարակական կազմակերպությանը Լոռի Բերդ համայնքի Ագարակ, Բովաձոր, Լոռի Բերդ, Լեջան, Կողես, Յաղդան, Հովնանաձոր, Սվերդլով և Ուռուտ բնակավայրերի անդամակցությանը:

Տալ հավանություն՝ Լոռի Բերդ համայնքի անունից որպես ՏԱԽ-ի անդամներ հանդես գալուն՝ հետևյալ կազմով.

1) Արայիկ Ներսիսյան – Լոռի Բերդ համայնքի ղեկավար

2) Էդուարդ Մելիքսեթյան - Լոռի Բերդ համայնքի ղեկավարի տեղակալ

3) Անի Մարտիրոսյան - Լոռի Բերդի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար

4) Գայանե Բալայան – «Արգինա» մշակութային ՀԿ-ի նախագահ

5) Արամ Ջանջուղազյան – «Հունայկա» ՍՊԸ բաժնետեր, Յաղդան բնակավայրի բնակիչ

6) Արայիկ Մկրտչյան - «Մկրտչյան Հոլդինգ» ՍՊԸ տնօրեն, Լեջան բնակավայրի բնակիչ

7) Հայրապետ Ջուլհակյան – «Հայրապետ Ջուլհակյան Սամվելի» ԱՁ տնօրեն, Ուռուտ բնակավայրի բնակիչ

8) Օլգա Մուրադյան - «Օլգա Մուրադյան» ԱՁ տնօրեն, Սվերդլով բնակավայրի բնակիչ

9) Էդգար Չատինյան – Լոռի Բերդ համայնքի Ագարակ բնակավայրի բնակիչ, ֆերմեր:

11 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ:

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 76-Ա/

Լսեցին՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԶԲԱՂԵՑՆՈՂ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 15-Ի ԹԻՎ 11-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Զեկ. / Անի Մարտիրոսյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով, ինչպես նաև «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով՝

1. **ավագանին որոշեց՝** Հաստատել՝ ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքական, հայեցողական, համայնքային ծառայության պաշտոններ զբաղեցնող և տեխնիկական սպասարկում իրականացնող անձնակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի ավագանու 2024թ. փետրվարի 15-ի «Լոռի Բերդի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, քաղաքական, հայեցողական, համայնքային ծառայության պաշտոններ զբաղեցնող և տեխնիկական սպասարկում իրականացնող անձնակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» թիվ 11-Ա որոշումը:

Ավագանին առաջարկեց, որ սույն որոշումն ուժի մեջ մտնի 2025 թվականի հունվարի 01-ից:

Հավելվածը կցվում է:

11 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ:

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 77-Ա/

Լսեցին՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՀԱՎԵԼԱՎՃԱՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի ԹԻՎ 57-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Զեկ. / Անի Մարտիրոսյան/

Ղեկավարվելով «Համայնքային ծառայությունա մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի բ) կետով և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 5-րդ և 7-րդ մասերով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով, ինչպես նաև հաշվի առնելով Լոռի Բերդ համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

ավագանին որոշեց՝ հաստատել՝ ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայողների հավելավճարի կիրառման կարգը և չափերը՝ համաձայն հավելվածի:

Ավագանին որոշեց ուժը կորցրած ճանաչել՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի ավագանու 2022թ. դեկտեմբերի 12-ի թիվ 57-Ա որոշումը:

Ավագանին որոշեց, որ սույն որոշումն ուժի մեջ մտնի 2025 թվականի հունվարի 01-ից:

Հավելվածը կցվում է:

14 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ:

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 78-Ա/

Լսեցին՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ, ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Զեկ. / Մարգարիտա Հովսեփյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ, 19-րդ, 20-րդ կետերով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ, 12-րդ, 13-րդ հոդվածներով, ինչպես նաև «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածով, ինչպես նաև հիմք ընդունելով՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքում 2025 թվականի համար տեղական տուրքերի և վճարների տեսակները և դրույքաչափերը սահմանելու նախագծի վերաբերյալ՝ ՀՀ ԱՆ (գլխավոր քարտուղարի 06.12.2024թ. թիվ /06/27.2/49756-2024 գրություն) իրավական ակտերի փորձաքննության գործակալության կողմից տրված պետական փորձագիտական դրական եզրակացությունը՝

ավագանին որոշեց՝ սահմանել՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքում 2025 թվականի համար տեղական տուրքերի տեսակները և դրույքաչափերը՝ համաձայն հավելված 1-ի:

Սահմանել՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքում 2025 թվականի համար տեղական վճարների տեսակները և դրույքաչափերը՝ համաձայն հավելված 2-ի:

Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հավելվածները կցվում են:

11 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ:

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 79-Ն/

Լսեցին՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Զեկ. / Մարգարիտա Հովսեփյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի և 33-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթներով, ինչպես նաև հիմք ընդունելով՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքում 2025 թվականի համար տեղական տուրքերի և վճարների տեսակները և դրույքաչափերը սահմանելու նախագծի վերաբերյալ՝ ՀՀ ԱՆ (գլխավոր քարտուղարի 06.12.2024թ. թիվ /06/27.2/49756-2024 գրություն) իրավական ակտերի փորձաքննության գործակալության կողմից տրված պետական փորձագիտական դրական եզրակացությունը՝

ավագանին որոշեց՝ հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի տարեկան բյուջեն՝ համաձայն 1-ից 5 հավելվածների:

Հաստատել համայնքի 2025թ. տարեկան բյուջեի եկամուտները՝ համաձայն հավելված 1-ի:

Հաստատել համայնքի 2025թ. տարեկան բյուջեի ծախսերը ըստ բյուջետային ծախսերի գործառնական և տնտեսագիտական դասակարգման՝ համաձայն հավելված 2-ի, 3-ի և 5-ի:

Հաստատել համայնքի 2025թ. տարեկան բյուջեի տարեսկզբի ազատ մնացորդը՝ համաձայն Հավելված 4-ի:
Սահմանել, որ.
1) ծախսերի ֆինանսավորումը կատարվում է փաստացի մուտքերի սահմաններում՝ պահպանելով ծախսերի համամասնությունը,
2) բյուջեի կատարման ընթացքում համայնքի ղեկավարը կարող է կատարել վերաբաշխումներ, որոնց հանրագումարը բյուջետային տարվա ընթացքում չի կարող գերազանցել տվյալ տարվա բյուջեի 15 տոկոսը:
Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից և տարածվում է 2025 թվականի հունվարի 1-ից ծագած իրավահարաբերությունների վրա:

Հավելվածները կցվում են:
11 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ:

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 80-Ն/

Լսեցին՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՎԵՑԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ԵՎ ԺԱՄԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Զեկ. / Անի Մարտիրոսյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածով՝

ավագանին որոշեց՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի ավագանու վեցերորդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օրը սահմանել՝ 2025 թվականի փետրվարի 11-ը, ժամը՝ 12:00-ն:

11 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ:
Հավելվածները կցվում են:
Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 81-Ա/

Համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ Մարգարիտա Հովսեփյանը ներկայացրեց 2024թ. վճարված սոցիալական օգնությունների և դրամական մրցանակների մասին հաղորդում՝ 05.12.2024-25.12.2024թթ. ժամանակահատվածի դրությամբ և 2024թ. տարեսկզբից.

2024թ վճարված սոց վճարների և դրամական մրցանակների մասին հաղորդում

Սոց. վճարի տեսակը	05.12.2024- 25.12.2024		2024թ.տարեսկզբից	
	Սոց. Վճար ստացած անձանց քանակը	Գումարը /հազ.դրամ /	Սոց. Վճար ստացած անձանց քանակը	Գումարը /հազ.դրամ /

Խայի ծննդյան ապակցությամբ	5	170,0	59	2 090,0
հուղարկավորության կազմակերպման համար	3	120,0	63	2 520,0
սոցիալական հատուկ արտոնություններ, այդ թվում	0	0	185	3200
նորակոչիկ զինվորի երդման արարողությանը մասնակցելու համար			14	560,0
Հավաքների մասնակցության համար			63	1 260,0
Այլ			7	280,0
Մայիսի 9-ի կապակցությամբ			1	100,0
Հանրակրթական դպրոցների 2024-2025թթ ուս. տարվա առաջին դասարանցիներ			59	590,0
Վերջին զանգի կապակցությամբ			41	410,0
Ընդամենը սոց վճար	**8**	**290,0**	**307**	**7 810,0**
Այլ մշակութային կազմակերպություններ նախահաշվով վճարված կրթական, մշակութին և սրորտային նպատսներ, այդ թվում.	**0**	**0**	**81**	**1190**
դրամական մրցանակներ			14	520,0
2024-2025թթ ուս. տարվա արդյունքներով բարձր առաջադիմություն ունեցող աշակերտներին			67	670,0

Նիստի փակում:

Ավագանու անդամներ՝

Ներսիսյան Արայիկ Մենժիկի
Վարդումյան Հայկ Վազգենի
Պապիկյան Վահրամ Ռոմիկի
Ներսեսյան Իրինա Վազգենի
Չիբուխչյան Արման Հրաչիկի
Սիմոնյան Անահիտ Բաբկենի
Շահնազարյան Թամարա Էդիկի
Վերմիշյան Կարլեն Ջիվանի
Չատինյան Վանո Վալերի
Գրիգորյան Աննա Հրայրի
Ասրյան Աննա Տիգրանի

Լոռի Բերդ համայնքի ղեկավար՝

Արայիկ Ներսիսյան _____

Նիստը արձանագրեց՝ Անի Մարտիրոսյանը _____

Կ.տ.